

«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական համագործակցության մասին

1. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«տնտեսական գործունեության առաջնահերթ համարվող տեսակները»՝ բոլոր անդամ պետությունների կողմից արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման համար որպես առաջնահերթություն սահմանված գործունեության տեսակներ.

«արդյունաբերական կոոպերացիա»՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների հաստատուն փոխշահավետ համագործակցություն արդյունաբերության ոլորտում.

«Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականություն»՝ արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով անդամ պետությունների գործունեություն, որն իրականացվում է անդամ պետությունների կողմից ինչպես ինքնուրույն, այնպես էլ խորհրդատվական աջակցությամբ եւ Հանձնաժողովի համակարգմամբ.

«արդյունաբերություն»՝ տնտեսական գործունեության տեսակների ամբողջություն, որոնք վերաբերում են արդյունահանական եւ մշակող արդյունաբերությանը՝ բացի սննդամթերքի մշակումից՝ համաձայն տնտեսական գործունեության ազգային դասակարգիչների: Արդյունաբերական գործունեության այլ տեսակներ կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համապատասխան բաժիններով.

«արդյունաբերական համախմբեր (կլաստերներ)»՝ արդյունաբերական փոխկապակցված խմբեր եւ դրանց հետ կապված կազմակերպություններ, որոնք փոխլրացնում են միմյանց եւ դրա հաշվին ուժեղացնում են իրենց մրցակցային առավելությունները.

«տեխնոլոգիական հարթակ»՝ նորարական ենթակառուցվածքի օբյեկտ, որը հնարավորություն է տալիս ապահովելու արդյունավետ հաղորդակցություն եւ բոլոր շահագրգիռ կողմերի (գործարարության, գիտության, պետության, հասարակական կազմակերպությունների) մասնակցության հիման վրա ստեղծելու առետորային հեռանկարային տեխնոլոգիաներ, բարձր տեխնոլոգիական, նորարական եւ մրցունակ արտադրանք:

2. Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով անդամ պետությունների խորհրդատվական աջակցության եւ գործունեության համակարգման շրջանակներում հանձնաժողովի լիազորությունները հետեւյալն են՝

1) աջակցություն՝

տեղեկատվության փոխանակման, խորհրդատվության անցկացման, հարցերի քննարկման համար համատեղ հարթակների ստեղծմանը, որոնք վերաբերում են արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նորարարական գործունեության հեռանկարային ուղղությունների մշակմանը.

առաջարկների մշակմանը, որոնք ուղղված են Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման ժամանակ անդամ պետությունների փոխգործակցության խորացմանը.

փորձի փոխանակմանը՝ արդյունաբերության մեջ բարեփոխումներ եւ կառուցվածքային վերափոխումներ անցկացնելու, նորարարական գործունեության խթանման, արդյունաբերության զարգացման հետ կապված.

համատեղ ծրագրերի եւ նախագծերի մշակմանն ու իրականացմանը.

անդամ պետությունների արդյունաբերական համալիրների համար փորձի փոխանակման ծրագրերի մշակմանը.

անդամ պետությունների փոքր եւ միջին ձեռնարկատիրությունների սուբյեկտներին արդյունաբերական կոոպերացիայի մեջ ներառելուն.

տեղեկատվական փոխգործակցությանը.

անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտում գլոբալ տնտեսական ճգնաժամի հետեւանքների դեմ համատեղ հակազդեցության միջոցների մշակմանն ու իրականացմանը.

Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձեւավորման առաջարկությունների մշակմանը:.

2) իրականացում՝

անդամ պետությունների կողմից դիտարկման ներկայացնելու համար արդյունաբերական համագործակցության հետագա զարգացման առաջարկների՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մասնակցի շահերը.

Միության շրջանակներում Արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման մոնիթորինգի եւ վերլուծության.

անդամ պետությունների համար արդյունաբերության զարգացման արդիական մեթոդներ հայտնաբերելու նպատակով արդյունաբերության զարգացման համաշխարհային փորձի ուսուցման.

3) Միջկառավարական խորհրդի որոշմամբ իրականացում՝

համատեղ ծրագրերի եւ նախագծերի մշակման, ֆինանսավորման ու իրականացման վերաբերյալ դրույթների նախագծերի նախապատրաստման.

Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության զարգացման ուղու վրա վարչական եւ այլ խոչընդոտների հայտնաբերման ու դրանք հետագայում վերացնելու մասին առաջարկների մշակման.

համատեղ արտադրանքի արտադրության կոոպերացիոն շղթաների ձեւավորման առաջարկների նախապատրաստման.

Միության շրջանակներում արդյունաբերական արտադրանքի շուկայի, ինչպես նաեւ երրորդ երկրների արտահանման շուկաների մոնիթորինգի.

անդամ պետությունների արդյունաբերության զարգացման վերլուծության.

անդամ պետությունների հետ համատեղ այլ (լրացուցիչ) փաստաթղթերի մշակման, ինչպիսիք կանոնները, կարգերն են, եւ Միության, ինչպես նաեւ համագործակցության շրջանակային համաձայնագրերի շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների, արդյունաբերական քաղաքականության իրականացման մեխանիզմների մշակման:

Նշված գործառույթների ցանկն ավարտուն չէ եւ կարող է ընդլայնվել Միջկառավարական խորհրդի որոշմամբ:
